ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

h/h	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • **Ընդունվել է** • **Մերժվել է**	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	Մարզահրապարակ որակյալ նոր կահավորմամբ	Առաջարկում ենք կառուցել համայնքային բացօդյա մարզահրապարակ,բարելավելու բնակչության կյանքի որակը և առողջությունը, որովհետև մարդկանց չի բավարարում ներկայիս մասնավոր մարզասրահը, որը վճարովի է և ոչ բոլորին է հասանելի: Ծրագիրը իրականացնելու համար հարկավոր է 5 միլիոն ՀՀ դրամ:	Ընդունվել է	-
2.	Լուսային և ձայնային սարքավորումների նախագիծ	«Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դալիճի համար ձեռք բերել ժամանակակից լուսային և ձայնային սարքվորումներ: Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 9500000 ՀՀ դրամ:	Մերժվել է	Առաջարկը մերժվել է կապիտալ բնույթի չլինելու պատճառով:

3.	«Մեծ արկածների սահարան»	«Ինստեփանավան» զարգացման հիմնադրամի կողմից առաջարկվում է Ստեփանավանում կառուցել 300 քմ տարածքով գերժամանակակից խաղահրապարակ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան անվտանգության համակարգերով: Ընդհանուր բյուջե՝ 10 մլն դրամ:	Մերժվել է	Առաջարկը մերժվել է, քանի որ Ստեփանավանում շուտով կվերաբացվի հիմնանորոգված և ժամանակակից ատրակցիոններով և խաղահրապարակներով համալրված այգին:
4.	Ապագայի խաղահրապարակ	«Ապագայի խաղահրապարակ» ապահով և ժամանակակից խաղահրապարակ Ստեփանավան համայնքի Արմանիս բնակավայրի համար: Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ է մոտավորապես 4000000 ՀՀ դրամ:	Ընդունվել է	-
5.	Տարածքի բարեկարգում	Առաջարկում եմ Ստեփանավան քաղաքի գերեզմանատան պարիսպների վերանորոգում, քանի որ հին պարիսպը փլվել է, տարածքը դարձել է աղբանոց, ինչը տհաճ է հարակից բնակվողների համար: Վերանորոգման արդյունքում նաև կբարեկարգվի հարակից տարածքը, որը կարևոր է և՛ նոր ասֆալտապատված փողոցի, և՛ ընդհանուր Ստեփանավան համայնքի տեսքի ու մաքրության	Ընդունվել է	-

		գործում:		
6.	«Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի տան բեմական տեխնիկայի արդիականացում»	«ԻնՍտեփանավան» զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված ծրագիրը նպատակ ունի Ստեփանավանի «Սոս Սարգսյանի» անվան նորովի վերանորոգված մշակույթի տունը վերազինել ժամանակակից լուսային և ձայնային սարքավորումներով՝ վերածելով այն տարածաշրջանային մշակութային առաջատար կենտրոնի: Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 9500000 ՀՀ դրամ	Մերժվել է	Առաջարկը մերժվել է, քանի որ նման առաջարկ ևս գրանցվել է ու մերժվել կապիտալ բնույթի չլինելու պատճառով:
7.	Կանգառ	Ներկայացնում եմ առաջարկ Ստեփանավան համայնքի Արմանիս բնակավայրում հանրային տրանսպորտի կանգառ հիմնելու մասին, որը նպատակ ունի ապահովելու բնակիչների հարմարավետությունն ու անվտանգությունը: Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ է մոտավորապես 500000 ՀՀ դրամ:	Ընդունվել է	-
8.	Մարզադահլիճի գույք	Նոր վերանորոգված մարզադահլիճի համար մոտավորապես 1200000դրամ է	Մերժվել է	Առաջարկը մերժվել է կապիտալ բնույթի չլինելու պատճառով:

		անհրաժեշտ, որպեսզի Ուրասար բնակավայրի երեխաները և երիտասարդները ունենան մարզվելու, առողջ ապրելակերպ վարելու հնարավորություն:		
9.	Այգի-պուրակ Կաթնաղբյուր բնակավայրում	Այս ծրագրի նպատակն է Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրում ստեղծել այգի-պուրակ, որը միտված է բնակավայրի և համայնքի բարելավմանը և կանաչապատմանը, համայնքում զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև կհանդիսանա համայնքի բնակիչների համար որպես ժամանցի, միմիանց հետ շփվելու, սպորտով զբաղվելու և զբոսանքի վայր: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 7 միլիոն դրամ:	Ընդունվել է	-
10.	Հրաշքների աշխարհ	Ցանկանում ենք հիմնել պարզ կառուցվածքով մի հեքիաթային զբոսայգի, որտեղ տեղակայված կլինեն պլաստմասսե կոստրուկցիայով և պարզ մեխանիզմով ատրակցիոններ,	Մերժվել է	Առաջարկը մերժվել է, քանի որ համայնքապետարանը սուբվենցիոն ծրագրի շրջանակներում նախատեսում է բարեկարգել թիվ 4 մանկապարտեզի բակի տարածքը:

		ավազային ավազան ծածկով ,հինգ գունագեղ նստարաններ, ջրի հոսքը կառավարող 2 ցայտաղբյուր, 3 փոքրիկ պարզ մեխանիզմով ատրակցիոններ, արևային էներգիայի հաշվին աշխատող լուսատուներ, աղբարկղներ և կանաչապատ տարածք: Ծրագրի արժեքը մոտավորապես 4000000 ՀՀ դրամ:		
11	3D վահանակ	Ստեփանավան համայնքում տեղադրել 3D գովազդային վահանակներ, որը կներառի QR կոդեր, տեսանյութեր, նկարներ, ինչպես նաև տեղեկատվական նյութեր Ստեփանավանի տեսարժան վայրերի մասին, մշակույթի և այլն:	Ընդունվել է	-
12	«Կյանք նոր շնչով. ֆուտբոլի դաշտի վերականգնում»	Այս ծրագիրը նպատակ ունի վերականգնել համայնքային ֆուտբոլի դաշտը, ստեղծել հարմարավետ նստարաններ, ինչպես նաև ձևավորել փոքր կանաչ այգի, որը կծառայի բնակիչներին՝ որպես հանգստի և ժամանցի վայր: Ընդհանուր բյուջե՝ 10 մլն դրամ	Ընդունվել է	-
13	Թենիսի կորտ	Թենիսի կորտ, որը կդառնա երիտասարդների ակտիվ ժամանցի	Ընդունվել է	-

		վայր, կպատկանի համայնքին, կգործի վճարովի ծառայություն, որից ստացված եկամուտը կուղղվի համայնքային բյուջե: Ընդհանուր բյուջեն 780000-2050.000 ՀՀ դրամ:		
14	Շների ապաստարանի ստեղծում և նրանց սննդի ապահովումը համաքաղաքացիների կողմից աղբի սորտավորման միջոցով	Կատարել շների հաշվառում, հետո կազմակերպել նրանց ստերջացումը և տեղափոխել հատուկ ապաստարան	Մերժվել է	Առաջարկը մերժվել է, քանի որ 2025 թվականի բյուջեով շների ստերջացում նախատեսված է,ինչ վերաբերվում է կացարաններին դրան կառաջացնեն պահպանման հետ կապված խնդիրներ: